

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_ ապրիլի 2019 թվականի N - Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶ-
ԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍ-
ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐ-
ՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱ-
ՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգա-
յին ակադեմիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի (Պ-069-25.03.2019-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաս-
տանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը սահմանված
կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մարտի

Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶ-
ԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱ-
ՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ (Պ-069-25.03.2019-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱ-
ՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված գործող իրավական կարգավորումներն ու մոտեցումները.

1. Նախագծից պարզ չէ, թե որ դեպքերն են դիտարկվում **բացառիկ**, որոնց առկայու-
թյան պարագայում միայն **օրենքով** կարող է օտարվել Ակադեմիային օգտագործման համար
ամրացված գույքը և ինչով է պայմանավորված Գիտությունների ազգային ակադեմիայի
առանձնահատկությունը գույքի օտարման կարգավորումների հարցում: Հարկ է նշել նաև,
որ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ ներկայացված չեն այն առանձնահատ-
կությունները, որոնք հաշվի առնելով անհրաժեշտություն է առաջանում Գիտությունների
ազգային ակադեմիայի համար բացառություններ նախատեսել գույքի օտարման կարգում:
Նշված տեղեկատվության բացակայությունը հնարավորություն չի տալիս լիարժեք ձևով
գնահատելու ներկայացված նախագծի ընդունման անհրաժեշտությունը և հիմնավորվա-
ծությունը:

2. «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝
պետական գույքի օտարման կարգը սահմանում է Կառավարությունը:

Կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշմամբ հաստատվել է
պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմա-
կերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման
կարգը, որի 4-րդ կետի համաձայն՝ **հիմնարկներին և կազմակերպություններին ամ-
րացված** Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի
N 470-Ն որոշմամբ հաստատված շենքերի ու շինությունների տարածագնահատման
գոտիականության 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր 10 մլն
դրամից ավելի գնահատված արժեքով անշարժ գույքի, Հայաստանի Հանրապետության
կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված շենքերի ու

շինությունների տարածագնահատման գոտիականության 4-16-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր 50 մլն դրամից ավելի գնահատված արժեքով անշարժ գույքի, ինչպես նաև յուրաքանչյուր միավոր 50 մլն դրամից ավելի գնահատված արժեքով շարժական, պետական անշարժ և շարժական գույքի վերանորոգման ու ապամոնտաժման արդյունքում պիտանի համարվող **գույքի օգարման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝** Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ վարչություն) ներկայացմամբ՝ կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, եթե համաձայնություն տալու պահին տվյալ գույքը փաստացի չի օգտագործվում:

Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված շենքերի ու շինությունների տարածագնահատման գոտիականության 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր մինչև 10 մլն դրամ գնահատված արժեքով անշարժ գույքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված շենքերի ու շինությունների տարածագնահատման գոտիականության 4-16-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր մինչև 50 մլն դրամ գնահատված արժեքով անշարժ գույքի, ինչպես նաև՝ յուրաքանչյուր միավոր մինչև 50 մլն դրամ գնահատված արժեքով շարժական ու պետական անշարժ և շարժական գույքի վերանորոգման ու ապամոնտաժման արդյունքում պիտանի համարվող **գույքի օգարման մասին որոշումն ընդունվում է վարչության պետի հրամանով՝** կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, եթե համաձայնություն տալու պահին տվյալ գույքը փաստացի չի օգտագործվում: Ընդ որում, շարժական, ինչպես նաև պետական անշարժ և շարժական գույքի վերանորոգման և ապամոնտաժման արդյունքում պիտանի համարվող գույքի (միավորի) օտարումն իրականացվում է աճուրդով՝ սույն կարգի 14.1-19-րդ կետերի պահանջներին համապատասխան:

3. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Ակադեմիային ամրացված գույքը:

Կարգավորումից բխում է, որ անհրաժեշտության պարագայում հիմնադիրը կարող է Ակադեմիային ամրացված գույքը հետ վերցնել և գույքի նշանակությանը համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով տիրապետել այն:

4. Միաժամանակ հարկ է նկատի ունենալ նաև, որ.

1) գիտության զարգացման հարցերով ոչ միայն զբաղվում են գիտությունների ազգային ակադեմիայում, այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում,

2) Ակադեմիական գիտության զարգացման համար գիտական կադրերից բացի չափազանց կարևոր նշանակություն ունի նաև նյութատեխնիկական բազան, որը Հայաստանի Հանրապետությունում նյութական միջոցների անբավարար լինելու պատճառով զարգացած չէ: Ընդ որում, շենք, շինություններն այդ նյութատեխնիկական բազայում, հատկապես բնական գիտությունների զարգացման գործում, էական նշանակություն չունեն,

3) Պետական գույքային հարաբերությունների կանոնակարգման դաշտում նման դրույթի սահմանումը գործնականում կարող է ստեղծել արհեստական խոչընդոտներ պետական գույքի արդյունավետ կառավարման բնագավառում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային օգտագործման համար ամրացված գույքը հասարակական կամ պետական կարիքների համար կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում և օրենքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը չի հանգեցնի պետական բյուջեի եկամուտների նվազեցման և ծախսերի ավելացման:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փաշինյան,

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բազրատյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-69-25.03.2019-ԳԿ-011/0):

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2019թ. մարտի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

25 մարտի 2019թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ակադեմիային օգտագործման համար ամրացված գույքը հասարակական կամ պետական կարիքների համար կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մեր ժողովրդի ստեղծած, պատմաճարտարապետական ազգային ժառանգության պահպանման հրամայականով, եւ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային ամրակցված գույքը բացառապես դրա հիմնադրման սկզբնական նպատակին եւ նշանակությանը համապատասխան օգտագործելու համար օրենսդրական երաշխիքների նախատեսման անհրաժեշտությամբ:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է սահմանել պարտադիր պահանջ առ այն, որ հասարակական կամ պետական կարիքների համար ԳԱԱ ամրակցված գույքի օտարումը կարող է կատարվել միայն բացառիկ հանգամանքների առկայության դեպքում եւ բացառապես օրենքով:

Ակնկալվող արդյունքները

Նախագծի ընդունման արդյունքում օրենքով կսահմանվի գիտական ներուժի եւ այդ ներուժի բնականոն գործունեության իրականացումն ապահովող շինությունների նպատակային օգտագործումը, պահպանումն ու փոխանցումն ապագա սերունդներին, ինչը կխթանի երկրում գիտության շարունակական զարգացումը, արդյունքում՝ գիտելիքահեն տնտեսության զարգացումը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հոդված 20. Ակադեմիայի գույքի կազմը

1. Ակադեմիային պատկանող գույքը բաղկացած է նրա սեփականությունը համարվող գույքից և գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նրան անժամկետ, անհատույց օգտագործման համար ամրացված գույքից:

2. Ակադեմիային ամրացված գույքի և բյուջետային միջոցների, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ակադեմիային օգտագործման համար ամրացված գույքը հասարակական կամ պետական կարիքների համար կարող է օտարվել միայն բազառիկ դեպքերում՝ օրենքով: